Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Շվանիձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի (6 դասաժամ), օտար լեզվի (անգլերեն-21 դասաժամ), երաժշտության (6 դասաժամ), կերպարվեստի (7 դասաժամ), ինֆորմատիկայի և ԹԳՀԳ-ի (5 դասաժամ), ֆիզիկայի (8 դասաժամ), քիմիայի (6 դասաժամ), կենսաբանության (6 դասաժամ), ՆԶՊ-ի (3 դասաժամ), շախմատի (4 դասաժամ), ֆիզկուլտուրայի (19 դասաժամ), տեխնոլոգիայի (3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3Х4 չափսի,
2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3. անձը հաստատող փաստաթուղթ,
4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
5. ինքնակենսագրություն (Ձև 5),
6. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում, եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **2023 թ-ի դեկտեմբերի 21-ից** մինչև **հունվարի 5-ը** ներառյալ, ամեն օր ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. հունվարի 9-ին՝ ժամը 12:00-ին**, Սյունիքի մարզի Շվանիձորի միջնակարգ դպրոցում:

Հասցե՝ գ. Շվանիձոր, 1-ին փողոց, 3-րդ նրբանցք, շենք 4:

Տեղեկությունների համար զանգահարել (0286) 95-431, 098089202 հեռախոսահամարներով: